

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ՏՕՆ Ա. Կ Ա. Ն. Ք. ԵՒ ԲԵՄԱ Կ Ա. Ն. Ք.

* 16 Նոյեմբեր Կիր. — Ս. Պատարագ մատուցեցաւ ի Ս. Յակոբ, քարոզեց Տ. Պարոյր Վրդ. «Մայր իմ և եղբարք իմ սօքանն որ դրանն Աստուծոյ լսեն և առնեն» բնաբանով։ Այս խօսքին մէջ ուղեց տեսնել Յիսուսի բմբունումը իր խիղճընէն և զաղափարներով կազմուելիք ընկերութեան մասին։ Միայն աւանդութիւններու կապուող անհատը յուղարկուող մըն է այդ ընկերութեանն ներս։ Եւ ընկերութիւն մը մեծութեանով չի կրնար ապրիլ։ Ընկերութեան մը մէջ մտնողը պէտք է մէկ կողմ գնէ անհատական եւ մասնակի իր կապերը, մոռնալու համար ինքզինքն ուր այն ամբողջին մէջ, ուր ան կը մտնէ։

* 22 Նոյ. Եր. — Մըք շրեւսիպալեսացն Պարբիլի եւ Միխայէլի. — Երէկ՝ նախատօնակը, այսօր՝ առաւօտեան ժամերութիւնն ու Ս. Պատարագը մատուցեցաւ ի Ս. Հրեշտակապետաց եկեղեցին։ Ս. Պատարագի աւարտումին Ամեն. Ս. Հայրը և հոգեւոր հայր սուրբերը պատուաւորեցան Ս. Հրեշտակապետաց Տեսուչ՝ Հոգ. Տ. Սուրէն Վրդ. ի կողմէ։

* 23 Նոյ. Կիր. — Ս. Պատարագը մատուցեցաւ ի Ս. Յարութիւն. քարոզեց Տ. Հայկազուն Վրդ. «Զի աւուրք չարութեան են» բնաբանով։ Հաստատեց թէ քրիստոնէութեան առաջին զարեքէն սկսեալ, չար օրերը եկեր են յաջորդաբար, և այսօր ալ նոյնն է պատկերը։ Ուստի կը մնայ իբրեւ իմաստուններ ապրիլ այս կեանքը, գիտակցութեամբ, Աստուծոյ մեղի բացած լոյսէ համբուն մէջէն ընթանալով։

* 30 Նոյ. Կիր. — Ս. Պատարագ մատուցեցաւ ի Ս. Յակոբ. քարոզեց Դեր. Տ. Արսէն Արք. Ղլտնեան, «Թէ մոռացայց զքեզ երուսաղէմ, մոռացի զիս ալ իմ, կցեսցի լիզու իմ ի քիմս իմ» բնաբանով, ցոյց տալով որ Հայուն երուսաղէմը Ս. Էջմիածինն է զոր չի կրնար ռեէ Հայ մոռնալ։ Յուսադրեց ներկաները ազապայի երջանիկ օրերու պատկերով, ուր Էջմիածինը պայծառ պիտի մնայ Հայութեան տաճած գործին չնորհիւ զէպի Մայր Հայրենիքը։

* 4 Դեկտ. Եշ. — Բնմայրումն Ս. Ասուածամբնի. Միաբանութիւնն ամբողջ Գեթսեմանիի Զորը իջաւ հանդիսաւոր երթով, ուր մատուցեցաւ Ս. Պատարագը Ս. Կուսին գերեզմանին վրայ. քարոզեց Տ. Գեորգ Վրդ. մատնանշելով Աստուածամոր սրբութիւնը, անարատութիւնը, անձնական կեանքին ու խորհուրդներուն մէջ անոր անբնութիւնը, այս բոլորը անոր համար որ Ս. Կոյրը ուխտի զաւակ մըն էր։

* 7 Դեկտ. Կիր. — Ս. Պատարագը մատուցեցաւ ի Ս. Յարութիւն, քարոզեց Տ. Նորայր Վրդ. պարզելով ֆառաքեր հետեանքները ազահութեան, չափազանցութեան, ըլլայ ֆիզիքական կեանքին մէջ մարդուն, ըլլայ ընկերային կեանքերուն մէջ ազգերուն, իրարու հետ ունեցած յարաբերութեանը ընթացքին։

* 12 Դեկտ. Եր. — Առաջին Լուսաւորացն մեքոց Թաղէսի եւ Բարդղիմէոսի Մըքազն Առաքելոցն. — Երէկ երեկոյան նախատօնակը, այսօր՝ ժամերութիւնն ու Ս. Պատարագը հանդիսաւորապէս պաշտուեցաւ ու մատուցեցաւ ի Ս. Յակոբ։

* 14 Դեկտ. Կիր. — Ս. Պատարագը մատուցեցաւ ի Ս. Յակոբ, քարոզեց Տ. Հայկազուն Վրդ. ցոյց տալով որ իրական ապաշխարութեան ու զղջումի նշանները արտաքին երեւոյթները չեն միայն, ինչպէս արտաքին պատահարները ապացոյցները չեն արկածեալներու մեղաւորութեան։

* 21 Դեկտ. Կիր. — Ս. Պատարագը մատուցեցաւ ի Ս. Յարութիւն, քարոզեց Տ. Պարգեւ Վրդ. «Երանի խաղաղարարաց զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին» բնաբանով։ Գոյց տուաւ թէ խաղաղութիւնը անհրաժեշտութիւն մըն է անհատական, ընկերային և ազգային կեանքերու մէջ, որպէսզի մարդիկ կարենան ապրիլ իրենց կեանքը, իրագործել իրենց գոյութեան նպատակը։ Ու պատերազմը պիտի չարունակուի որքան ատեն արդարութիւնը, ազատութիւնը օտանկոխ կ'ըլլան։ Բայց խաղաղութիւնը պիտի վերահաստատուի աշխարհի վրայ։

* 22 Դեկտեմբեր Բշ. — Յղութիւն Ս. Ասուածամբնի ի յԱմենայն. — Երէկ՝ ի Ս. Յակոբ կատարուած էր նախատօնակը, այսօր, Միաբանութիւնն ու ուսանողութիւնը Գեթսեմանիի Զորը իջան, հաւատացեալներու փոքրիկ խումբի մը ներկայութեան (ամպամած ու անձրեւոտ եղանակին պատճառաւ), «Հրաշսփառ» ի մուտքէն յետոյ մատուցանելու համար Ս. Պատարագը Աստուածամոր գերեզմանին վրայ։ Պատարագեց Հոգ. Տ. Սուրէն Վրդ. եպիսկոպոսական թագով. քարոզեց Տ. Շաւարշ Վրդ. «Մօրենին վառեալ էր հրով, և ոչ այրէր...» բնաբանով, վերլուծելով Ս. Կոյսին կենցաղը, ցոյց տուաւ թէ, մեր սրբազան հայրապետներէն երկուսն, անիկա մօրենին է, որ իր անբնութեամբ, հաւատարմութեամբ և բոլոր առաքելութիւններով մեր հիացումներուն զիմաց կը վառի, բայց չի հատնիր, չայրիր։

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ք

* 1 Նոյեմ. Եր. — Ի զիմաց Ամեն. Ս. Պատարարք Հօր՝ Լուսարարապետ Գեր. Տ. Կիւրեղ Եր. Վրդ. ներկայ գտնուեցաւ երուսաղէմի մէջ Սկովտիական Եկեղեցոյ երիցական խորհուրդի հաստատման կրօնական արարողութեան։

* 4 Նոյեմ. Գշ. — Ս. Ուխտիս Միաբան Հոգ. Տ. Շնորհք Վրդ. Գալուստեան, որ Վերաահուսչ նշանակուած է Անթիլիանի Կոյրեւմանոց, այսօր Հայֆայի ուղեգծով մեկնեցաւ իր նոր պաշտօնատեղին։

* 5 Նոյեմբեր Գշ. — Ամեն. Ս. Պատարարք Հայրը, հետն ունենալով Լուսարարապետ Գեր. Տ. Կիւրեղ Եր. Վրդ. և ներկայ գտնուեցաւ քաղաքիս Կ. Մ. Ս. Ա. տարեկան պաղարին, որուն բացումը կատարուեցաւ Նորին Ամենապատուեթեան աղօթքով։

※ 14 Նոյեմ. Ուր. — Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարը այցելելին Աւստրալիական Զօրագուն-դերու բարձրաստիճան սպաներէն իւժին կօմիւն և ի. Սպիկերզ գնդապետները, և Մաքսուել և Բաքսզըն հաղարապետները և Մր. Ժ. Նազալ, Ապա ներկայացան Ամեն. Ս. Պատրիարք Հօր՝ Պատրիարքարանի Դահլիճին մէջ, ուր պատուա-սիրութիւններ եղան անոնց:

— Տնօրէն խոշորոյ անդամ Հոգ. Տ. Գէորգ Վրդ. ճանաչեան որ ամիսէ մը ի վեր կը գտնուէր Լիբանան եւ Սիրիա, թէ՛ օդափոխութեան և թէ մասնաւոր պաշտօնով, այսօր վերադարձաւ Ս. Աթոս:

※ 20 Նոյեմ. Եշ. — Ալն. Տէր և Տիկին Տօթթ. Համօ Օսմանեան իրենց Լիբանան և Սուրիա ճամբորդութիւնէն վերադարձին վերստին այցելելին Ամեն. Ս. Պատրիարք Հօր:

※ 22 Նոյեմբեր Եր. — Տեղւոյս իսլամական Բարձր Խորհուրդի Նախագահ Էմին Էֆէնտի Ապտէլհատի, ընկերակցութեամբ Երուսաղէմի իսլամ Աւագանիէն մէկուն, այցելել Ամեն. Ս. Պատրիարք Հօր, և սիրալիր տեսակցութիւն մը ունեցաւ Նորին Ամենապատուութեան հետ:

※ 26 Նոյեմ. Դշ. — Ս. Աթոս ժամանելին Էջմիածնի Լուսարարապետ և Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի անդամ Դեր. Տ. Արսէն Ս. Արքեպս. Ղլտնեան և Պ. Համբարձում Առաքելեան:

※ 29 Նոյեմ. Եր. — Ս. Աթոսոյս Լուսարարապետ Դեր. Տ. Կիւրեղ Ի. Վրդ. մեկնեցաւ Յոպպէ, վաղուան կիրակի օր Ս. Պատարագ մատուցանելու և տեղւոյն ազգայնոց փափաքին համաձայն բանախօսելու Ս. Դիմալրի Ազգ. վարժարանին մէջ, և հաղորդելու անոնց ապաւորութիւններ Ս. Էջմիածնէն և Հայաստանէն:

※ 2 Դեկտ. Դշ. — Դեր. Տ. Արսէն Ս. Արքեպս. Ղլտնեան և Պ. Համբարձում Առաքելեան մեկնեցան Հայֆա, ատկից ուղևորելու համար Պէյրութ, — Ամեն. Ս. Պատրիարք Հօր կարգադրութեամբ մինչև Հայֆա իրենց ընկերացան կալուածոց Տեսուչ Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. և Աւագ-Թարգման Հոգ. Տ. Հրազդան Արեղայ:

※ 8 Դեկտ. Բշ. — Ամեն. Ս. Պատրիարք Հօր այցելելին տեղւոյս կառավարչատունէն Մր. Ռոնալմըն և Մր. Մանթուրա:

ԱՍՐԵՊԱՇՏԱԿԱՆ ՆՈՒԷՐՆԵՐ

Շնորհակալութեամբ եւ օրհնութեամբ կ'արձանագրեմք 1941 տարւոյ ընթացիմ Ս. Արքուդս Եղսմ հետեւեալ բարեպաշտական նուէրները.

1. Օր. Մարի Նազաչեան, Սրբոց Յակոբեանց Տաճարին՝ իր վրի ռսկի խաչը չղթալով, կախուելու Ս. Աստուածածնայ պատկերէն:

2. Տիկ. Ուսմանա Ժամկոչեան, Ս. Յակոբեանց Տաճարին՝ մէկ արծաթեայ փոքր ոտք կախուելու Ս. Աստուածածնայ պատկերէն:

3. Օր. Մարի Իսաուրեան, Ս. Յակոբեանց Տաճարին՝ մէկ արծաթեայ փոքր կանթեղ Ս. Դիմալրի մէջ կախուելու:

4. Օր. Իսկուհի Սահակեան, Ս. Յակոբեանց Տաճարին՝ մէկ ինքնածեղացործ կորփուրայ:

5. Տիկ. Զարուհի Խըմբիան, Ս. Յակոբեանց Տաճարին՝ մէկ ինքնածեղացործ Ս. Սեղանի ծածկոց:

6. Տիկ. Մարի Քէօրօղլանեան, Ս. Յակոբեանց Տաճարին՝ երկու ինքնածեղացործ փոքր վարագոյրներ աջակողմեան և ձախակողմեան զասերու տեանց Ս. Աստուածածնայ պատկերներու առջև կախուելու:

7. Նոր-Ջուղայեցի Տիրուհի Թագուհի Տէր Ներսէս Պօղոսեան, Ս. Յակոբեանց Տաճարին՝ մէկ տպածոյ մետաքս խաչի բռնիչ:

8. Նոր-Ջուղայեցի Օր. Մարիամ Նազարէթեան, Ս. Յակոբեանց Տաճարին՝ երկու կլոր զանթէլ Սեղանի աշտանակներու ներքե փռուելու:

9. Նոր-Ջուղայեցի Տիկ. Իսալիկ Յարութիւն Ստեփանոսեան, Ս. Յակոբեանց Տաճարին՝ մէկ տպածոյ մետաքս խաչի բռնիչ:

10. Նոր-Ջուղայեցի Օր. Մարիամ Շամպեան, Ս. Յակոբեանց Տաճարին՝ ինքնածեղացործ արուեստական ծաղիկներ Ս. Սեղանի վրայ դրուելու:

11. Նոր-Ջուղայեցի Տիկ. Աննա Գալստան Միքայէլեան, Ս. Յակոբեանց Տաճարին՝ երկու տպածոյ մետաքս խաչի բռնիչներ:

12. Նոր-Ջուղայեցի Օր. Աննա Լիօն Պետրոսեան, Ս. Յակոբեանց Տաճարին՝ մէկ ինքնածեղացործ կորփուրայ:

13. Նոր-Ջուղայեցի Տիկ. Մարգարիտ Դուհասեան, Ս. Յակոբեանց Տաճարին՝ մէկ ինքնածեղացործ կորփուրայ:

14. Տիկ. Վարդուհի Կիւլէքճեան, Ս. Յակոբեանց Տաճարին՝ մէկ պարզ ռսկի մատանի Ս. Աստուածածնայ պատկերէն կախուելու:

15. Դահլիճեարնակ Տէր և Տիկին Լիօն և Վիկթորիա Շաքեան, Ս. Յակոբեանց Տաճարին՝ մէկ արծաթեայ թիւղբարի կանթեղ:

16. Տիկ. Մ. Հէքիմեան, Ս. Յակոբեանց Տաճարին՝ մէկ ճերմակ մետաքս խաչի բռնիչ:

17. Պ. Ե. Ս. Յակոբեան, Ս. Յակոբեանց Տաճարին՝ մէկ արծաթեայ կանթեղ Ս. Դիմալրի համար:

18. Դահլիճեարնակ Տիկին Սրբուհի Կոկիկեան, Ս. Յակոբեանց Տաճարին՝ Ս. Սեղանի ծածկոց և կորփուրայ:

19. Դահլիճեարնակ Օր. Ազատուհի Աւետիսեան, Ս. Յակոբեանց Տաճարին՝ մէկ սկիւնի ծածկոց եւ մէկ խաչի բռնիչ:

20. Մեծ. Մէթր Շաւարշ Սիւնքեան և իր բարեպաշտուհի Տիկինը, իրենց Երուսաղէմ այցելութեան առթիւ, Ս. Յարութեան Տաճարին համար նուիրելին զոյգ մը սպիտակ մետաքսեայ չաւրջաւ և արծաթեայ բուրվառի մը շինութեան ծախքը:

Լուսարարապէս

ԿԻՐԵՂ Ի. ՎՐԴ. ԻՍՐԱԷԼԵԱՆ